



## Ս Փ Յ Ո Ւ Ռ Ո Ւ Մ

### ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԵջ

Երուսաղեմ, 2 սեպտեմբեր 1952.— Ս. Աստվածածնի Վերափոխման տոնախմբությունը այս տարի ալ բացառիկ շուրջով կատարվեցավ Ս. Երուսաղեմի մեջ ըստ հին տոմարի, 31 օգոստոս կիրակի օր:

Ս. քաջաքի սովորության համաձայն, Ս. Աստվածածնի Վերափոխութեն 15 օրեր առաջ, ամեն օր հանդիսավոր սուրբ պատարագ կմատուցվի Ս. Կույսի գերեզմանին վրա: Թեև տարվույն մեջ ամեն օր անխափան սուրբ պատարագ տեղի կունենա հիշյալ սրբավայրին մեջ, բայց այս 15-օրյա պատարագները կը լլան հանդիսավոր ու բոլոր միաբանության մասնակցությամբ:

Հստ ընկալայ սովորության, առաջին ամագամ պատարագ կմատուցանե Հույն Եկեղեցին Ս. Կույսի գերեզմանին վրա, և որոշյալ ժամուն սրբավայրը կհանձնն Հայ Եկեղեցիով: Մենք մեր հետ ունենալով դպտի և ասորի համայնքներու, որոնք մեր հետևորդներու են բոլոր սրբավայրերուն մեջ, կսկսինք սուրբ պատարագի: Դպտիք և ասորին իրավունք չունին Ս. Կույսի գերեզմանին մեջ պատարագելու, միայն Հույն և Հայ Եկեղեցիներու վերապահված է այդ. մեր հետևորդ ազգերը կպատարագեն մասնավոր սեղաններու վրա նույն տաճարին մեջ, որոնք Հայ Եկեղեցիով սեփականություններ են:

Դպտիներու և ասորիներու պատարագի սկզբավորությունը և վերջավորությունը կախում ունի Հայ Եկեղեցիունը պատարագի տեղութենեն, այսինքն մինչև որ Հայ Եկեղեցին չսկսի պատարագի, հիշյալ համայնքներու շեն կրնար սկսի իրենց պատարագները, և երբ Հայ Եկեղեցին կվերջացնե իր պատարագը, անոնք ալ ստիպված են ուր որ ալ ըլլան ընդհատելու իրենց ժամերգությունը:

Երկրորդ պարագա մը ես, մեր հետևորդները պարտավոր են լուելու այն պահուն, երբ Հայ վարդապետը կբարողել:

Ս. Կույսի գերեզմանը կգտնվի Երուսաղե-

մի արևելյան կողմը, պարիսպեն դուրս, Զիթենյաց լեռան ստորոտը և Գեթսեմանի պարտեզին մեջ:

Ս. Կույսի գերեզմանի Եկեղեցին բավական ընդարձակ և գետնավոր է: Բազմաթիվ քարե սանդուկներով կարելի է իշնել տաճարին մեջ, որուն արևելյան կողմը կգտնվի Ս. Կույսի գերեզմանը:

Այս սրբավայրը կպատկանի միայն Հույն և Հայաստանյաց Եկեղեցիներու, բոլոր ժամանելու և նորոգություններու այս երկու Եկեղեցիներու հոգան: Դպտիք և ասորին իրենց հատկացված սեղաններու վրա կպատարագեն շաբաթվա ընթացքին որոշած օրերու, բայց որուէ կերպով նորոգություն կամ պատիկ կարգադրություն մը ընելու իրավունք չունին:

Լատին Եկեղեցին բնավ իրավունք չունի այս սրբավայրին մեջ, թեև ժամանակին ունեցած են. միայն իրենք Վերափոխման օրը պարզ ուստի կիշնեն Ս. Կույսի գերեզմանին:

Տաճարին շրջակայրը ամբողջ պարտեզներ են և ձիթենիներու ծառերով լեցուն: Եկեղեցվոր արևմտյան կողմը և ամենին արժեքավոր հողամասին վրա կգտնվի հայոց ընդարձակ պարտեզը: Այս Եկեղեցիին պարտեզը միշտ բաց է հայ ժողովուրդին առջև, որոնք հոն կգտնեն իրենց հանդիսաւը երր կայցելեն Ս. Կույսի գերեզմանին:

Վերափոխման տոնին շաբաթը այս պարտեզին մեջ կդրվի Հակա վրան մը, որուն մեջ միաբանությունը կհանգչի իր պարագո ժամանակությունուն:

Երուսաղեմ, 2 սեպտեմբեր 1952.— Ս. գերեզմանի առջև կատարվել վերջ Տաճարի «Ուրախ եղէ ես» սաղմոսերգությունը, կպաշտվի երեկոյան ժամերգությունը: Սուրբն սրբազն իր հուզիլ ձայնով կերգելոյս Զուարթաց, և ապա տեղի կունենա վաղվան տոնին մեծահանդես նախատոնա-

կը: Հետ նախատոնակի փոքր հանդիսատե և երեկոյան ընթրիքն հետո ժամը 7-ին, գիշերախանն և խորհրդավոր ստվերներուն տակ տեղի կռնենա Եկեղեց և հսկում, ապա առավոտյան ժամերգություն: Սույն արարողությունները տեսքին մինչև գիշերային ժամը 11-ը, որմե ետք միաբանություն և ժողովուրդ վայրակ զահերով և հանդիսավոր զնացքով վերադարձան մայրավանք:

31 օգոստոս, կիրակի.— Վերափուլումն Ս. Աստվածածնի: — Այսօր շատ քիչ անգամ տեսնված եռուղիու մը կտիրե Սրբոց Հակոբյանց հարկին մեջ: Ժողովուրդը ամրող, վանքեն մինչև Գեթսեմանիի պարտեզը, խումբ-խումբ կհառաջանան, առավոտյան ժամը 7-ին, նախադահությամբ գերաշնորհ տեր Սուրբն եպիսկոպոսի: Գերաշնորհ եպիսկոպոս, հոգեշնորհ վարդապետներ և ուսանողություն կիշնեն Ս. Աստվածածնի տաճարը մուտքի հանդիսավոր հրաշափառեն ետք:

Կասիի եպիսկոպոսական սուրբ պատարագը Ս. Կույսի գերեզմանին վրա: Օրվան ժամաբարն է գերաշնորհ տեր Սուրբն սրբազն, որուն կապասարկեն բարեշնորհ Սիմոն, Վահան, Գեորգ ավագ սարկավագները: Խոկ հոգեշնորհ տեր Հայկագուն վարդապետ կանոնափոր կերպով կղեկավարե սուրբ պատարագի երգեցողությունները:

Ճաշու գիրքեն վերջ Սուրբն սրբազն կբարող Ս. Կույսի մաքրության և խոնարհության մասին, ծանրանարկվ մայրական պարտականությանց վրա, թելադրելով քրիստոնյա մայրերու թե պետք է իրենց ուղղությունը բնարեն Ս. Կույս Մարիամը:

Հետ սուրբ պատարագի կատարվեցավ Անդաստան նախագահությամբ պատարագիչ սրբազնին:

Արարողությանց ավարտումն վերջ, միաբանությունը ելավ վանքին պարտեզը: Հոնքիչ մը հանգիստ վերջ նույն գնացքով ուղղվեցավ դեպի վանք:

Խոկ ժողովուրդը մինչև ուշ ատեն լավ պահեր անցուց հայոց պարտեզին մեջ:

Սրբոց Հակոբյանց զինվորյալ միաբանությունը սա անստուգ օրերուն իսկ, մեկդի թողլով բոլոր դժվարությունները և ահազին թիւ նյութական և թիւ բարոյական զոհողություններ հանձն կառնե և միշտ կաշխատի վառ և պայծառ պահել բոլոր սրբավայրերը, որոնք Հայ Եկեղեցին և ժողովուրդին արյան և զարավոր աշխատանքի ու հավատքի արդյունքներն են:

Ս. Երրուսաղեմի սրբատեղյաց մատակարարությունը կարելի է ամենին դժվար մեկ գործը նկատել Երրուսաղեմի Պատրիարքության, որովհետև ինչ որ մեր ձեռքն է մեր իրավունքն է. անգին գանձեր են, հետևաբար պահսկավոր ենք զանոնք պահել իրենց մեծության և շքեղության մեջ, և այս բոլորը կրկան նյութական հսկաւութեան զոհողություններով: Այսօր վանքը չունի կամ հազիվ ունի այս նյութականը, բայց ունի բարոյական առաքինությունը և զոհողության աննվաճողին. այս վերջինը անշուշտ ավելի կարժեքն առաջինը, հետևաբար գովելի է Սրբոց Հակոբյանց միաբանությունը սկսյալ իր սրբազն Տեղապահեն մինչև իր հետին միաբանը, որ այս դժնդակ օրերուն մեջ կիվեն այսպիսի ժանր բայց քաղցր ըեռ մը:

«Եռու յուր», 13 և 16 սեպտեմբերի 1952 թ.

